

ԱՂԳԱՅԻՆ

Աղբարայ նախընթաց թուով խոստացանք՝ ի տեղեկութիւն մեր հեռուոր ընթերցողաց, հըրատարակել և Պօլսոյ Յունաց Ս. Պատրիարքին ճառն, զոր մեր Ս. Պատրիարք Հօր ըրած այցելութեան առթիւ, Գուճարուի աղգային մայր եկեղեցւոյն մէջ կարդացեր է:

Ահաւասիկ յիշեալ ճառին թարգմանութիւնն, զոր և Պօլսոյ աղգային լրագիրներէն կը քաղեմք, և որ ուշադրութեան արժանի՝ եղբայրսիրական գրուած մքն է:

Սիրելի եղբարք և որդեակիք ՚ի Տէր:

Ինչպէս որ բազմիցս բնութեան սերտ և զօրաւոր կապերովը կապեալ ընտանիքի մ'անդամաց մէջ անակնկալ գէպքեր ծագելով պատճառ կըլլան ցրտութեան և վիճից առիթներու, որք փոխադարձ ատելութեանց և կռուոց կը յանգին, նոյնպէս ևս զՏէրն Յիսուս առաջնորդ և հիմնադիր խոստովանող ընկերակցութեան մէջ, որ է սուրբ եկեղեցին՝ Գրիստոսի, ինչպէս ծանօթ է, ժամանակաց բերումը խիստ բազում խնդիրներ արտադրեց, զորս խաղաղութեան թշնամին երկպառակութեանց և խռովութեանց փոխադրեց ՚ի մէջ մի Տէր, մի հաւատ, և մի մկրտութիւն ունեցողաց:

Բայց որովհետեւ, սիրելիք, Հայկական եկեղեցին կը կապակցի մերայնոց հետ ոչ միայն նախնի պատմութեամբ և հոգևոր յարաբերութեամբ, այլ նաև ժամանակային դիպուածոց և պատահարաց նոյնութեամբ, և նա մանաւանդ այժմ Սուլթան Ապտիւլ Ազիզ խան արքային մերոյ հովանաւորութեանը ներքև զարգացման և եղբայրական սիրոյ ասպարէզին մէջ ընթանալու մասին մեր երկաքանչիւրոյն ունեցած ըզձից նամանութեամբն, ուստի փոխադարձաբար նուիրական և անհրաժեշտ պարտականութիւն ունիմք երկաքանչիւր՝ երկու քոյր եկեղեցեաց բարեկամական յարաբերութիւնները մշակելու, և ամենայն մտերմութեամբ՝ նոյն ժամանակ ըզձայի համամտութիւնն ու միութիւնը պատրաստելու. վասնզի թէև ստոյգ է թէ «Ոչ է մեզ գիտել զժամն և զժամանակս զոր Հայր եղ յիւրում իշխանութեան» սուկայն ոչ սակաւ անդիմաբանելի է մեր գործակցութեանց անհրաժեշտ ըլլալն ընդ հուպ յաշուութեան գործին միութեան, որոյ հարցն մեր խիստ փափաքեցանք բայց չարժանացան:

Յարատեւնք ուրեմն, սիրելիք, յարատեւնք երկաքանչիւր բառնալու մեր մէջէն մնացեալ խոչընդոտներն և փրկարար եկեղեցական միութեան ճանապարհն յարգարելու:

Եւ Աստուածն խաղաղութեան, որ հիշան ՚ի մեռելոց զՍուլթան հօտից զմեծն արեամբ յաւի-

տենական ախտին, զՏէրն մեր Յիսուս, հաստատեաց զմէջ ՚ի դարձմ բարութեան, առնել զկամս նորա, և արացեց ՚ի մեզ զհաճոյս առաջնի իւր ՚ի ձեռն Յիսուսի Գրիստոսի, որում փառք յաւիտեանս ամենն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Աղգային կրօնական ժողովոյ:

Աղգային կրօնական ժողովն ՚ի նկատի առնելով Ս. Էջմիածնի Արարատ ամապոյց յ31 Մարտի Գ. թիւ թերթը, և տեսնելով որ Յակովբն Սիւնեաց Կ. Պօլսոյ մէջ երեցած է այս անգամ, պատշաճ համարեց ՚իզգուշութիւն եկեղեցական Պաշտօնէից և համարէն մերազնայն՝ վերոյիշեալ թերթին հետեւել յայտարարութիւնն տալ ՚ի հրատարակութիւն յամենայն աղգային լրագիրս Տաճկաստանի:

«Քանի տարիներէ հետէ իւր գայթակղեցուցիչ, զըշուելի և անուղղայ վարուց, բարուց և անկրօնութեան պատճառաւ իսպառ կարգալոյժ Յակովբն Սիւնեաց՝ երկու տարի յառաջ գալով ՚ի Մայր Աթոս, և զանձն զղջացած կեղծելով իւր շար գործոց և ընթացից համար՝ յանուն վեհափառ Հայրապետի խնդիր տուած էր, որ ապաշխարանաց ենթարկուելով՝ արժանանայ իւր առաջին եկեղեցական վիճակին. ուստի և երեք ամիս միջոցաւ խրկուեցաւ ՚ի սուրբ Վանս Գեղարքայ ապաշխարել. սակայն դեռ երկու ամիսը չըրացուցած՝ իւր ապականեալ հոտն և այլանդակեալ գոյնը կրկին փորձով ցոյց տուած և արտաքուստ էր:

«Ներկայ ամսոյ մէջ յիշեալ անձն դարձեալ եկաւ ՚ի Ս. Էջմիածն, և զառաջինն զինքն ՚ի բոլոր սրտէ խղճահար և զղջացած ձեւայնելով՝ մեղայական խնդիր տուաւ յամեն վեհա. Հայրապետի, Թեւ ըստ առածին փորձեալը կրկին փորձել չէր խնայելութիւն, բայց սակայն եօթնամասնեքինէն ծանր կշիռ ունեցող և եկեղեցւոյ համար միշտ փափուկ ոյսպիսի խնդրոյ վերայ ներողութիւն աչօք նայելով՝ յանձնեցաւ Սիւնոյի մի վերջնական փորձի ենթարկել. և Սիւնեանցի տասն տարի ապաշխարել խոստանալուն փոխարէն ինչ ամիս տարի ապաշխարելու համար Երուսղէ փրճակում Սմարտու վանքը զրկել որոշեցաւ. և ըստ այնմ մինչ հրամանագիրներն պատրաստուած էին, և զՍիւնեանցն հրապարակելով որ արտաքուստ տնօրինուած էր, նա ինքն սկսաւ իւր բնածիր վարուք և ընթացիք փոխտեսան շաւիղ բռնել, մինչև անգամ «տիեզերական վարդապետ և պատգամաւոր» ևայն ստորագրութեամբ թղթեր գրելոյ յանգրեց, որք միայն խնայար անձի ներքի կըլինին. վասնորոյ իսպառ մերժուեցաւ ՚ի հաղորդակցութենէ եկեղեցւոյ, և կործանաւ իբրև հոտեալ անգամ. և որպէսզի յիշեալ Սիւնեանցն չյանգրէ իբրև հոգևորական և իբրև անգամ եկեղեցւոյ Հայաստանայց՝ չըլնէ

աղգիս մէջ միամտաները խորհրդ համար, ինչպէս որ շատ անգամ և շատ տեղեր չըլնէ և խարիւղ յաղոյն լուսնուած է, հարկ եղաւ զեկեղեցւոյ հրատարակել ՚ի ընդհանրութիւն համայն եկեղեցական պաշտօնէից և մերազնայն»:

Տեղի կերոյ: Կ. Պօլսոյ, 17 Մարտի 1875, ՚ի Պատրիարքարանն Հայոց:

Կ. Պօլսոյ Մատիւ լրագրոյն Մայիսի 20 թուոյն մէջ հետեւեալ յօդուածն կընթեւեւումք, որ ձեւաբար լրագրի Լորտ եպիսկոպոսին առ մեր Ս. Պատրիարքն ըրած այցելութիւնն կըստորագրէ հանգերձ մասնաւոր պարագայիւք նորին:

Երէկ ձեւաբար լրագրի Լորտ եպիսկոպոսն անգլիացի Պատ. Տ. Քրիստի քահանային հետ պատրիարքարան գալով այցելութիւն տուաւ Ս. Պատրիարքին և արժանաւայել պատուով ընդունուեցաւ:

Նորին Գերապատուութիւնը Գաղղիերէն հասկնալով բայց խօսիլ չընալով, անգլիերէն խօսեցաւ, Տ. Քրիստի ալ գաղղիերէնի թարգմանեց, և Ս. Պատրիարքն ալ գաղղ. պատասխանեց:

Տեսակցութիւնը կէս ժամէ աւելի տեւեց և խօսակցութեան նիւթ եղաւ ընկալանաբար Գերմանիոյ մէջ տիրած կրօնական շարժումն, ինչպէս նաև Անգլիական, Գերմանական և Յունական եկեղեցեաց մէջ սխառ կրօնական բանակցութիւնք: Յետոյ խօսքը Հայաստանեայց եկեղեցւոյն վրայ դառնալով, Տ. Քրիստի յայտարարեց թէ իւր մինչև ցարդ ստացած տեղեկութեամբ վերահասու եղած է, թէ Հայաստանեայց եկեղեցին ամեն եկեղեցիներէն աւելի նախնական եկեղեցւոյ ծէսերն ու աւանդութիւնները պահպանած է, և թէ Պօնս քաղաքը դուրմարուելիք ժողովին մէջ, ուր Յունական և Անգլիական եկեղեցեաց աստուածաբաններն ալ պիտի գտնուին, Հայոց եկեղեցւոյ դաւանութեան և ծիսից վրայ գրաւոր տեղեկութիւն մը կրնայ մեծ լոյս տալ և հետեւաբար օգտակար արդիւնք մ'ունենալ:

Սրապէս Պատրիարքն Հայաստանեայց եկեղեցւոյն ուրիշ քրիստոնեայ եկեղեցեաց նկատմամբ վաղուց ՚ի վեր ունեցած ներող և եղբայրսիրական հոգին բացատրելով՝ զարմանք յայտնեց թէ յանուն քրիստոնէական հին եկեղեցեաց ժողով մը կը գումարուի ՚ի Գերմանիա և քրիստոնէական ամենէն հին եկեղեցւոյն, այն է Հայաստանեայց եկեղեցւոյ՝ հրաւէր չըլլող այդ ժողովին մասնակցելու:

Ասոր վրայ Լորտ եպիսկոպոսն ալ ցաւ յայտնելով խնդրեց որ ինչպէս Յունական, Լատինական և Անգլիական եկեղեցեաց դաւանութեան և ծիսից վերաբերեալ կէտերը մէկ մէկու հետ բաղդատական կերպիւ գրի առնուած են, նոյնպէս և Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանու-

երկուց ամաց Սիւնոյոս կրօնեցաւ) խորհուրդարարին, և հաճութեամբ և հաւանութեամբ ամենեցուն թէ Յովսէփեանց և թէ Դանիէլեանց՝ արձանագիր յօրինեցին, և ամենեքին ձեռագրեցին. այս ատենական արձանագրի հիման վերայ Էջմիածնի մէջ ժողովոյ գումարումն հրատարակեցին. չըլակայ գաւառներէն բազում հոգևորականք և աշխարհականք հրաւիրանօք հաւաքվեցան Էջմիածին, և ամենեքեան յօժարեցան և կնքեցին Դանիէլի ընտրութիւնն: Ահա այս հրաւիրանաց և ընտրութեան բազմաստորագիր թղթոց վերայ էր և ձեռագրութիւնն Դաւթի կնակէթեցւոյ, որ այն ինչ դարձել էր ՚ի Կ. Պօլսոյ, և այս թղթերն յանձնեցին չորս հրաւիրակաց՝ երկու եպիսկոպոսի և երկու վարդապետի որ տանին առ Դանիէլ յԵրուսղիս, և վաւերացուցեալ պատճէնս առաքելին ՚ի կոստանդնուպոլիս:

Այլ թէ ինչ հանգամանօք էր եկել Դաւթի Դանիէթեցին Կ. Պօլսոյն Էջմիածին, այն Պէրպլերեանն չէ գրել, և ինչ միանգամ գրել է, քաղուած է Ենճեան Յօհաննէսի թղթերէն, որպէս ինքն Պէրպլերեանն կը խոստովանի, և չէր կորելի քան զայն աւելի ստոյգ ինչ քաղել անփոփոխ Դաւթի խորհուրդ ճանապարհներով էր շրթել և յափշտակել Դանիէլի ձեռքէն Կ. Պօլսոյ Պատրիարքական գաւազանն, և բորբոքել էր եկեղեցւոյ մէջ մեծ հողեհ՝ Էջմիածնի նուիրակ Գալուստ եպիսկոպոսի դրդութեամբ, վասնորոյ և ինքն ևս նոյնօրինակ խորհուրդութեանց զոհ զնաց, և իւր յափշտակեալ գաւազանն ձեռնէ

ձեռն անցանելով՝ եհաս Ենճեան Յօհաննէսի ձեռն. որ երբ գրաւեց պատրիարքական աթոռն՝ կամենալով հեռացնել կրկինէն կոսակածելի անձինքն, չարար խտրութիւն ինչ ներքի և աններքի հնարից մէջ, այլ առանց խղճահարութեան Դանիէլին աքտոր արժանացոյց ՚ի Տէնեդոս (Պօհճոս ատասի) կղզին, և անտի Երուսղիոյ առաջնորդութիւնն, Գալուստ եպիսկոպոսին ՚ի կիպրոս կղզին և անտի Ալիայ առաջնորդութիւնն. իսկ Դաւթին խոստանալով իւր օգնութիւնն, խորհուրդ ետ դառնալ Էջմիածին և անդ դատանել հնար ինչ և ընտրել ՚ի կաթողիկոսութիւն:

Այս երկու եպիսկոպոսք միոյ բնաւորութեան տէր լինելով, և երկուսի ևս նպատակն և շահն ՚ի միում կիտի կենդրոնացեալ գորով, եղեն սերտ բարեկամ, երկուքին ևս քարն ՚ի ծոցի կրելով. և Դաւթի՝ որ խոստացաւ դառնալ Էջմիածին, ոչ մարթացաւ իսկայն կատարել, որոյ անակնկալ պատճառն էր այս. նախ զի երկուքի ՚ի ներքիսէ և ՚ի հնարից նորա և ՚ի յայտնի թշնամութենէ, զոր ներքէս չունէր յայնմհետէ սքողել որովհետեւ Գալուստ եպիսկոպոսի հետ գժտութիւնն՝ այլ ևս հաշտութեան յուսոյ հնար թողած չէր. որովհետեւ թողեալ միւս ամենայն պարագայքն, Գալուստ եպիսկոպոսն ներքիսի ուղարկած նուիրակն էր ՚ի Կ. Պօլսոյ, և Գալուստ՝ ինչմիանգամ արել էր, ներքէս պատրաստ էր ամենայնս արդարացնել, նաև Դանիէլի դէմ արածն:

Երկրորդ՝ Գրիգոր վարդապետի անակնկալ նամակն, որ գրել էր Վլադիկաւկաս բերդէն, և նուաւ իմացում կուտայր Յովսէփոյ մահն, որ

տեղի ունեցել էր 1801 Մարտի 11. և կը յորդորէր որ Դաւթի գուն գործէ կաթողիկոսութիւնն իւր ձեռն անցունել, և այս նպատակաւ ուղարկել էր նորա ձեռքն՝ Յովսէփոյ ճոխութենէն դանձ բազում, և խոստացել էր այլ ևս հասուցանել որքան պիտոյ իցէ, և գրել էր՝ որ այն նամակի պատասխանեցն ունի սպասել իմողով ուր պիտի վերադառնայր, որ Յովսէփոյ բեռներն փոխարկէր յառձեռն պատրաստ դրամ իմացաւ Դաւթի Գրիգորի ամենայն դիտաւորութիւններն, և յայտնեց իսկ Ենճեան Յօհաննէս Պատրիարքին, և նորա հետ միասին սկսաւ ՚ի կողմն իւր որսալ հայաղգեաց ամբոխն: Բայց մի անխոհեմ խօսք բաւական եղև, որ նորա ամենայն մեքենայքն վերուվայր տապալեցան: Հայերն ստէպ երթեկ կ'անէին պատրիարքարան, ուր և Դաւթի կը յաճախէր: Հացալիստաց մին՝ Պատրիարքի առջևն ասաց Դաւթին՝ Հայր սուրբ, էր այդքան Էջմիածնի Հայրապետութեան կըցանկաս, լաւ չէ՞ որ Պօլսոյ Պատրիարք մնայիր: Դաւթի մնաց մի այնպիսի նեղ տեղ, ուր բազում անգամ կընկնի առիւծները յամեն կողմանց շուրջ պատեալ պաշարեալ կըլինի ՚ի կենսախուզ որսորդաց: Ո՛չ ապաքէն Պատրիարք էր կամաւ Դանիէլի, և այնպէս գըրվեցաւ աթոռէն, որ չիմացաւ թէ ո՞վ հանեց նորա ոտքի տակէն տախտակներն: Չկամեցաւ անել իթէ արժանի էի պատրիարքութեան, էր երկու աւուրց մէջ՝ դեռ աթոռոյ վերայ չնստած՝ դահալէժ արիք, որ մի գուցէ թէ Ենճեան Յօհաննէսի սրտի մէջ կասկած ձգէ, թէ սա դեռ

ան և ծիսից վերաբերեալ նոյն կէտերը գրի
նուստեղ Պատրիարքարանին իրեն հաղոր-
մին : Ս. Պատրիարքը հաճութիւն տալով ա-
ւարկեց որ 3 եկեղեցեաց դաւանութեան և
բազմաթիւ կէտերը նախապէս իրեն հա-
ղորդութիւն գրով, որպէսզի ինքն ալ Հայոց եկե-
ղեցոյն յիշեալ կէտերուն նկատմամբ ունեցած
հարապետութիւնն առնելու նշանակէ և Տ.
Քրիստի յանձնէ : Տ. Քրիստի ալ խոստացաւ կա-
րգել Ս. Պատրիարքին առաջարկութիւնը :
Ի վերջոյ Լորտ եպիսկոպոսը շնորհակալութիւն
տալով Ս. Պատրիարքը Հօր ըրած սիրալիր ըն-
տանութեան, և Հայաստանի այց եկեղեցւոյ
և ազգին նոյնպէս և Ս. Պատրիարքը Հօր համար
մտաւորութիւններ ըրաւ : Նոյնը ըրաւ փո-
քազարձարար Ս. Պատրիարքն ալ Անգղիական
ազգին բարօրութեան և Լորտ եպիսկոպո-
սի կենաց համար, նոյնպէս նաև ամեն քրիս-
տոյ ազգաց իրարու հետ քրիստոնէավայել
և եղբայրութեամբ վարուելուն համար
միևնոյն Քրիստոսի հիմնած եկեղեցւոյն և
Աւետարանին ճշմարիտ աշակերտներ :
Ս. եղբայրասիրական և պատուասիրական
հարապետութեան ետև գերաւ Լորտ եպիսկոպոսն
Պատ. Տ. Քրիստի գոհութեամբ բաժնուեցան
Պատրիարքին :
Լորտ եպիսկոպոսին մեկնելէն ետև մայրաքա-
ղաքի Հելլենական նախորդ դեսպան Պ. Սիմօն
պատրիարքարան եկաւ իւր հրատեղի ողջոյնը
տալ մեր Ս. Պատրիարքը Հօր, և սիրալիր մե-
ղանօք ընդունուեցաւ :

Վերոնկալան ազգային վարչութիւնն տակա-
ն ընչ ժամանակ է որ՝ զինի բաղում գ. ժ. ա-
ւարկեց և ներդրութեանց, կարող եղև նպաս-
տաւոր ազգայնոց սմանց և առատապարգև շնոր-
հակոց ազգային գլխաւոր բարերարաց՝ ա-
ւարկել ին պարտուց մնացորդէն, որ 5000 լի-
ւրջ չափ էր :

Ս. Քրիստի վարչութեան անդամներն ևս
ան կելլէ, որ Փարիզի մէջ ժամանակաւ
տատուեալ Հայկազեան վարժարանին կրկե-
րեթի, և որ շատ տարուան տոկոսիւք հան-
գրով ոչ նուազ ծանր է, կտրծեմք, քան ըզ-
րուսն առաջին հին պարտուց :

Ս. Քրիստի հաւանականաբար այս պահանջեալ
պարտքն իրաւացի պիտի չլինի : Սակայն որով-
հետև Փարիզի Հայկազեան վարժարանին ան-
ուսմբ փոխ առնուած է նորա վերատեսչաց
մեք, և որովհետև այն ժամանակուան ազ-
գային վարչութիւնն անուշադրութեամբ ծանր
պիտի գործեալ է զյիշեալ վարժարանն պաշ-
տպայէս ազգային հաստատութիւն ճանաչե-
լով զժ. աւարին կարծեմք որ կարելի լինի

մտադած չէ պատրիարքութիւնն, և պա-
տուանեց. լաւ է որ էլ միաձնի ժամակոյ լի-
ւրջ, քան ի Պոլսի Պատրիարք :

Ս. Քրիստի գոհութեան թէ ժողովուրդն և թէ
պատրիարքն. որովհետև էլ միաձնի ժամակոյ ու-
նեն վերադաս գրեց քան զմայրաքաղաքի
պատրիարքութիւնն, որ Յօհան Ոսկեբերանի
վարչութեան համապատու իմն էր և բար-
ութեամբ արտաքսեցին : Դաւիթ վարձեց ձի.
տաղնապաւ հասաւ էլ միաձնի. ուր տեսաւ
որ Դանիէլ կրկին ընտրվել է, և նորա ընտրու-
ման թղթոյն ոչ միայն ձեռագրեց, այլև իւր
ողովնէ մի առանձին հրաւիրանաց և շնորհա-
ւորութեան նամակ գրեց առ Դանիէլ, և միա-
տեղութեան նամակաւոյ հետ ուղարկեց :

Դաւիթ ունէր էլ միաձնի մէջ համախոհներ,
որ ծածուկ պատմեց Պօլսոյ յեղափոխութեց
որպէս ինքեան էր հաճոյ, և ցոյց տուեց
որ Քրիստի վարդապետի Չաքարեան նա-
ման, և ամենեցուն յոյս տուեց՝ որ Յովսէփայ
անձերն նոցա հետ եղբայրաբաժին կանէ, եթէ
նոյն իրեն՝ որ կաթողիկոսութիւնն ստանայ :
Ս. Քրիստի վարչութեան անձնատուր էին, միւր բերե-
լով Եղիազար Անթափեցւոյ և փութիւր Պետրոսի
կաթողիկոսաց անցքն, բայց ի բաց հրատարե-
ան. բայց որք ներսիսի երկաթի գաւազանէն
պահպանին ազատուիլ, և յօժար էին նորա նը-
նաման համար ամենայն զոհ յանձն առնուլ,
որովհետև նորա ոսկոյ փողփողմունքէն, և

Ազգին իւր վրայէն նետուել այս պարտքը. մա-
նաւանդ որ պարտապահանջն գաղղիացի է և
ամենայն զօրութեամբ կը պաշտպանուի ի դես-
պանատանէն Գաղղիոյ :

Արդէն այս գործն ծանր կերպարանք մի ըս-
տացած է ազգին նկատմամբ. վասնզի Կ. Պօլսոյ
Բէրա արուարձանի եկեղեցւոյն մէկ կարևոր
կալուածքը Ալքազար անուանեալ, ի փոխարէն
այս ճանորդ պարտուց գրաւեալ է Բարձրագոյն
Դրան միջոցաւ :

Մասիւ լրագիրն իւր թուոյն մէջ որ ՚ի 17 աւե-
սոյս, զյետագայ տեղեկութիւնքն կը հրատա-
րակէ այն դժբաղդ գործոյն վրայօք :

«Փարիզի Հայկազեան վարժարանի պարտուց
հին ինքիրն այս օրերն դարձեալ եթեան ելաւ
աւելի ծանր կերպիւ :

Բ. Դրան արտաքին գործոց ֆիթապէթէն
անցեալ չաթու գիր եկաւ ՚ի պատրիարքարան
թէ յիշեալ վարժարանին պարտուց վճարման
համար Բերայի եկեղեցւոյ կալուածներէն Ալքա-
զարը գրաւուած է, և թէ Բերայի թաղապետու-
թեան ալ ՚ի պաշտօնէ իմաց արուած է, որպէս
զի յիշեալ կալուածն ոչ ուրիշ վարձուի և ոչ
ալ վաճառուի :

Այս ազգարարութեան վրայ՝ ազգային վար-
չութեան փաղաքական ժողովն երեքշաբթի օրը
յատուկ նիստ մ՝ ընելով հերքողական գիր մը
զիրէ քառ Բ. Դուսն, և նորա միջոցաւ ուրիշ
գիր մ՝ ալ առ Գաղղիոյ դեսպանատունն, յայ-
տարարելով թէ այդ պարտքն Հայոց ազգին
չվերաբերիր, և թէ Բերայի կամ ուրիշ որ և է
թաղի մը եկեղեցւոյ կալուածոյ վարձքը նոյն
թաղին վարժարանաց և աղքատաց վերաբերեալ
ըլլալով, ուրիշ որ և է ազգային ժախտուց կամ
պարտուց չլինար գործածուիլ և մնանաւոր
պարտուիլ հակառակ տրամադրութեանց պատ-
րիարքական Պէտաթիւն և կայսերական հրամա-
նաւ հաստատեալ և վաւերացեալ ազգային
Սահմանադրութեան :

Փաղաքական ժողովն որոշեց նաև սոյն հինա-
ւուրց խնդրոյն վրայ յատուկ տեղեկագիր մը
պատրաստել և արտաքին գործոց փեսմա. նա-
խարարին ներկայացնել, խնդրելով որ յատուկ
յանձնաժողովոյ մը միջոցաւ քննուի, և պարտ-
քն որուն ըլլալը ստուգուելով՝ անկէ միայն
պահանջուի :

Ամենապատու իօրիմեան Ս. Հայրիկին ներկայ-
ութիւնն ՚ի քաղաքիս հասարակութեան համա-
կրական սէրն գրեթէ բոլորովին շարժեց առ Ն.
բարձր Սրբապետութիւնն և ժողովուրդեան հայրե-
նասիրական եռանդն աւելցուց. որ ուրիշ բան
չնկատեր յանձն իօրիմեան Հայրիկին, բայց մի-
այն խաղաղութեան հրեշտակ մի և բարեխնամ
ազգասէր Հովիւ մի. ուստի այս պատճառաւ է

նորա հետ միացան, և սկսան Տփլիսեցւոյ հետ
բանագնաց լինիլ :

Մեղք Աբրահամ Էնախորդեանն յարեցաւ
Դաւիթի կողմն, և Դաւիթ վրաց արքայորդւոյ
որ ունէր ի հարսնութեան զգուստը հայազգի
Աբամելիքեան իշխանագնէլ կամքն որսացաւ,
և նամակ գրել տուեց առ էլ միաձնի միաբա-
նութիւնն, որ Դաւիթին տան կաթողիկոսու-
թիւնն. այլ ուխտապահ միաբանութիւնն յան-
գրիման կացուցանելով իւր առ Դանիէլ գրեալ
նամակի պատճէնն, և Դաւիթի ստորագրութիւնն՝
մերկապարանոյ արար արքայորդւոյ միջնորդու-
թեան անպատշաճութիւնն :

Դաւիթ տեսնելով թէ արքայորդին չ՝ մար-
թացաւ առնել ինչ՝ դիմեց առ իսանն Երևանայ,
և ոչ ինչայելով Չաքարեան Գրիգոր վարդապե-
տի ուղարկած ոսկոյն՝ հաճեցոյց նորա սիրան,
և նա առաքեց ի սուրբ էլ միաձնի երեք Պարսիկ
երևելի իշխանք, որ Միաբանից սիրան փոխեն
և համոզեն որ կաթողիկոսական աթոռն նուե-
րեն Դաւիթին : Ինչ կասկած կայ, որ թէ ոմանք
ի օրտէ չկամէին Դաւիթի կաթողիկոսանալն,
բաղումք ևս յերկիւղէ ներսիս՝ սկսան մերժել
Դաւիթի առաջարկութիւնն : Օր չէր անցանէր՝
որ Չաքարեան Գրիգոր վարդապետէն նամակ և
դրամ չգայր թէ առ Դաւիթ և թէ առ համա-
խոհս նորա, որ ոսկիքն կ՝ առնուին, և ի հաճոյս
Ներսիսի՝ Դաւիթի ընտրութիւնն կը մերժէին :

ՏԵՐՈՒՆԻ ԳԱՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

անշուշտ, որ ժողովուրդն կը վաղէ և կը խուսի
անդ՝ ուր նորին Սրբապետութիւնն կը գտնուի, որ-
պէսզի նորա քաջալերեալ և սիրայորդ որ խօս-
քերն մտիկ ընէ :

Ամսոյս 20ին օրն՝ քաղաքիս Հայ ընթերցատան
մէջ Ս. Հայրիկին հոգևոր որդի արժաւ Գարեգին
վարդապետն Սրուանձտեանց՝ գեղեցիկ առե-
նախօսութիւն մի ըրաւ, իրեն բնաբան ունե-
նալով «Նախնիք մեր և մեք» : Սրբապետ Հայ-
րիկին իւր ներկայութեամբ պատուեց զԸնթեր-
ցատուն մեր՝ ուր կը գտնուէր խուսն բազմութիւն
հանդիսականաց. զորս հայրական քաղցր խօս-
քերով քաջալերեց յարատեւել իրենց ուսում
նասիրական եռանդեան մէջ և նպաստամատոյց
լինել այսպիսի ազգօգուտ պատուական հաս-
տատութեան :

Նոյնպէս ամսոյս 22ին հինգշաբթի օրն՝ քա-
ղաքիս Անձնուէր ընկերութեան տարեդարձին
հանդէսն առաջին անգամ տեղի ունեցաւ ՚ի Ս.
Մեսրոպեան վարժարանի ՚ի ներկայութեան Ս.
Հայրիկին ու երևելի և ուսումնական ազգայնոց
Յիշեալ ընկերութեան հիմնադիր անդամներէն
շատերն հայերէն և թուրքերէն լեզուաւ ճառեր
կարդացին սովորոնի վերայ, որք այնչափ ըն-
տիր ու գեղեցիկ էին, որ բազմաթիւ ունկըն-
դրաց ուշադրութիւնն և համակրութիւնն իրա-
պէս գրաւեցին : Անձնուէր ընկերութիւնն մեր
ազգայնոց շատերուն գրեթէ անձանօթ էր,
քանզի նա գիշերներն լուելայն կախատէր
ցարդ յօգուտ անգէտ աղքատիկ աղքայնոց.
Իւր նպատակն բարձր և վսեմէ, վասնզի մար-
դասիրութեան և ազգասիրութեան վերայ հիմ-
նեալ է : Ժիր, ուշիմ և պարկեշտ պատանիք են
այս ընկերութեան հիմնադիր անդամք. որք
ուխտ ըրած կերելին անձանուէր անխոնջ եռան-
դեամբ աշխատել գրել կարդալ սովորեցնելու
անուս և անգէտ համազգեաց : Անձնուէր ըն-
կերութիւնն ՚ի մօտ աւուրս հրատարակած իւր
երկամեայ հաշուեցուցակին մէջ թէ և նշանակած
չէր մինչև ցարդ դաս տուած աշակերտաց թիւը՝
սակայն մեր սրացեալ տեղեկութեանց նայելով՝
1873 Մայիսի 1էն մինչև ցայսօր՝ 275 ազգայնոց
հայերէն և թուրքերէն ուսուցեր է և այժմիւր
դասատուութեանց յաճախող անձանց թիւը 47
է : Մեք կ'ենթադրեմք թէ յիշեալ 275 աշա-
կերտաց մէջ կը գտնուէին նաև այնպիսի անձինք,
որք բնաւ կարդալ և գրել չէին գիտեր : Ուստի
հարկ չէ բսել թէ այսօրինակ ընկերութիւն մի,
որ այսպիսի վսեմ և մարդասիրական նպատակ
ունի, որչափ քաջալերութեան արժանի է : Մեք
մեր կողմանէ կը բսեմք, Պատիւ և Քաջալերու-
թիւն այս պատուական ընկերութիւնը հաստա-
տող ժիր և ազգասէր անդամոց :

Կ. Պօլսոյ Հայոց Ուսումնական Խորհրդոյն առ
ազգային կեդրոնական վարչութիւնն տուած
տեղեկագիրն ցաւօք սրտի կարդացինք վասնզի
յիշեալ մայրաքաղաքին Հայ վարժարանաց վրա-
յօք հետեւեալ տեղեկութիւնք կը պարունակէ :

«Ներկայ ազգային վարժարաններն, կըսէ,
այնպիսի կերպարանք մը առած են, որոց մէջ
ամենեկին յառաջադիմութիւն չկայ : Աշակերտք
հոն միայն ժամանակ վատնելու կերթան և ոչ
բան սովորու. և որ չարն է, վարքերնին կ'ա-
պականեն : Լաւ կը լինէր որ տուններն մնային.
վասնզի եթէ տան մէջ բան չէին սովորեր, գոնէ
վարքերնին անարատ կը մնար» :

Այս տողից նշանակութիւնը խիստ ծանր է և
չափազանցութեամբ կամ յատուկ դիտմամբ մը
գրեալ կերելին մեզ. ուստի հեռաւոր երկիրնե-
րու մէջ նոցա պատճառելու տխուր տպաւորու-
թիւնը թեթեւցնելու համար, արժան կը համար-
ուիմք յառաջ բերել աստ Մասիսի դատողու-
թիւնը ՚ի մասին Կ. Պօլսոյ ազգային ուսումնա-
կան խորհրդոյն : «Այնպիսի անձինք գտնուել
են, կըսէ, ուսումնական խորհրդոյն մէջ, որք
դժբաղդաբար իրենց լեզուին ուղղադրութիւնն
իսկ չեն գիտեր» :

Դարձեալ կըսէ Մասիս. «Ազգային դաստիարա-
կութեան կենսական խնդիրն այնպիսի ձախող
ձեռքերու յանձնուած է, որք մասնաւորաց
չահուն և նպատակին ծառայելու համար՝ մինչև՝

իսկ ազգային վարժարաններն 'ի պաշտօնէ կը վատահամբաւեն իբրև անբարոյականութեան կեդրոններ' :

Մ Ա Ն Ա Գ Ո Յ Ժ

Ցաւօք սրտի կիմանամք թէ աղնուախոյլ Նէվրիկ տիկինն որ Տատեան մեծաշուք Գրիգոր պէյին լծակիցն էր և դուստր Միսաքեան մեծա վարդերես աղային , զկնի երկարատե հիւանդութեան մը , ամսոյս շքին առ Ստուած փոխեր է 'ի Մաքրի գիւղն 'ի հասակի 31 ամսոյ : Հանգուցեալն՝ բարեսիրտ , խոհական և ազնիւ տիկին մըն էր . որոյ կանխահաս կորուսան անմխիթար ցաւոց մէջ թողուց զՏատեան և Միսաքեան գերդաստաններն :

Ձ Ա Ն Ա Ձ Ա Ն Կ Ա Ի Ք Ի Ք

Զմիւռնիս , 31 Մայիս :

Բարձրապատիւ Հիւսէին Աջնի փաշան 'ի պատճառս իւր անձնական տկարութեանն , հազիւ թէ ամսոյս շքին կարող եղև իւր փոխարձայցելութիւնն մատուցանել հիւպատոսաց :

Նորին Բարձրութիւնն , ընկերութեամբ վստաքթօր Սէրփիլէն Եֆէնտի Հայ բժշկին , երէկ գաղղիական շողեհաւով մեկնեցաւ 'ի Մարտիրոս երթալու . ուսկից վիշիի հանքային ջուրերը պիտի երթայ :

Մեր նահանգին նոր կուսակալ վսե Գայսէրի Աճմէտ փաշան , որոյ մարդասիրական բարեխնամ վարչութիւնն յայտնի է քաղաքիս հասարակութեան , այսօր աւստրիական շողեհաւով հասաւ և արժանաւոր յարգանքով ընդունուեցաւ : Նորին վսեմութիւնն՝ նախ քան զմեկնիս 'ի Կ. Պօլսոյ , պատիւ ունեցաւ օգնատախառ Սուլթանին ներկայանալու :

Գերա . իէրօթէնս արշիմանտրիթը՝ որ քաղաքիս մէջ Ս. Երուսաղէմոյ վանուց փոխանորդութեան պաշտօն կրկնէր և յանցելու մն յիշեալ Ս. քաղաքին Յունաց Պատրիարք ընտրեցաւ , տակաւին 'ի Զմիւռնա կըգտնուի : Արդէն երկու Յոյն վարդապետ եկած են յԵրուսաղէմայ՝ զնորընտիր Պատրիարքն հրաւիրելու և նորա ուղեկից լինելու 'ի պատրիարքական աթոռ իւր : Միւս կողմանէ Երուսաղէմայ Յունաց վանուց միաբաններէն տասնի չափ վարդապետք աղերսագիր մատուցած են Բ. Գրան , որ զվիշալ ընտրութիւնն անվաւեր համարի վասն պատճառաց՝ զորս յառաջ կըբերեն :

Հայոց եկեղեցւոյն երբեմն անարժան վարդապետ՝ Սիւնեաց Յակոբն , որոյ կարգալոյծ վսեւելոյն յայտարարութիւնն լրագրոյս երկրորդ երեսն հրատարակած եմք , Կ. Պօլսէն գալով՝ շարժ մի 'ի քաղաքս մնալէ ետև , ամսոյս 24ին յԱղէքսանդրիա գնաց , ուսկից 'ի Հնդկաստան երթալու գիտաւորութիւն ունի կրօնն , իւր եկեղեցական զգեստովը ժողովուրդը խաբելու նպատակաւ :

Քաղաքիս Էնֆարիալ անուն օրագրոյն մէջ անցեալ շաբթու հրատարակուած մէկ նամակը , (որ Հալէպէն գրուած էր և այն կողմերն քոյէրսոյն երևան ելլեն կըհաստատէր) իրաւամբ շատ վախոցուց զհասարակութիւնն : Սակայն ետքէն հասած պաշտօնական լուրերն և մասնաւորապէս Հալէպի Գաղղիոյ հիւպատոսէն առ քաղաքիս գաղղիացի ընդհանուր հիւպատոս գրուած նամակն՝ բարեբաղդաբար բոլորովին սուտի կըհանեն նոյն ձախորդ լուրերն :

Գրեթէ երկու շաբթ յառաջ , Մեծին Բրիտանիոյ դեսպան 'ի Կ. Պօլսոյ սըր Էնթոնի Էլիօթ , ընկերութեամբ իւր որդւոյն՝ այնինչ կը պտըտէր Թարապիտոյի ծովեղբրքը , օսմանեան զինուոր մի որ սատակ արբեալ էր , կերթայ կը զարնուի Նորին վսեմութեան . որ հազիւ թէ իւր սրամատութիւնն յայտնել կուզէր , կըտեսնէ թէ զինուորը սուրբ պատեանէն հանելով իւր վերայ կը յարձակի կատաղութեամբ : Բարեբաղդաբար ոստիկանութեան գնդապետն որ հեռու չէր նոյն տեղէն , իսկոյն արբեալ զինուորը կըբռնէ :

Այս անգամ զինուորն դատաստանական ատենանի մը առ ջև դատուելով , հնգեամեայ շրջ

կայակապ աշխատութեան դատապարտեցաւ : Բայ յայտնեն Բարձրագոյն Գուռն իւր ցաւն յայտնեց Մեծին Բրիտանիոյ ներկայացուցիչին 'ի վերայ այս դժբաղդ դէպքին , որ բարեբաղդաբար ծանրագոյն հետեւանք մի չունեցաւ :

Ուրախ որտիւ կիմանամք , թէ բարձրախորհիւն որ իւր հաւատարիմ և գործունեայ պաշտօնէից արժանիքը քաջ կըծանաչէ , բարեհաճեր է դարձեալ վսեմա . Նուպար փաշային յանձնել Եգիպտոսի արտաքին գործոց բարձր և փափուկ պաշտօնը :

Կըհաւատան թէ Եգիպտոսի Խորհիւն Յուլիսի առջի օրերն պիտի մեկնի Աղէքսանդրիայէն՝ 'ի Կ. Պօլսոյ երթալու համար . ուր արդէն պատրաստութիւնք կըլինին վասն ընդունելութեան Նորին Բարձրութեան :

Վսեմա . հայկազուն Աբրահամ փաշան , որ ամեն բարեպատեհ առթիւ մեծ պատիւ կըբերէ իւր ազգին ընդհանրութեանն , ամսոյս 15ին Պէյքօզի իւր ամենագեղեցիկ և հազուադիւս պարտիզին մէջ դաշտային մեծ հացկերոյթ մի տուաւ , ուր հրաւիրեալ ներկայ գտնուեցան Գերմանիոյ և Սուարիոյ դեսպանք և դեսպանուհիք , Հիւր սեպուհն և մօսիւ Բօչէք՝ հանդերձ ընտանեօք իւրովք , նաև Սալմ կոմսն :

Վսեմա . Աբրահամ փաշան՝ իւր անձին յատկացեալ եգիպտական դեղեցիկ շողեհաւն այս առթիւ յիշեալ բարձրատիճան անձանց տրամադրութեանց ներքև դրած էր , վասն երթելու իւր նոյն աւուր :

Կ. Պօլսոյ Հայրէիք լրագրոյն Մայիսի 27 թիւն հետեւեալ տողերն կըպարունակէ .

«Զմիւռնոյ աղղային Բաղաքական ժողովը խաղաղութիւնը և միութիւնը Զմիւռնոյ աղղայնոց մէջ վերահաստատուած ըլլալը հեռագրաւ ծանուցանելով Ս. Պատրիարք Հօր և աղղային ժողովոց վերջնորութեան հրահանգին հրաման ըրաւ արժա . Գարեգին վարդապետին (Սրուանձտեան) որ ժողովոց վերջնորութեանը ձեռնարկէ անմիջապէս» :

Բարեպաշտ և ուսումնասէր անձ մի կաղայէ զարժա . խմբագրութիւնն Արարապայ Ս. Էլմիհանի , յուղարկել նմա՝ ձեռամբ Արշալուսոյ , զամսագիրն 1873 Ապրիլի 1 , խոստանալով վճարել զարժէս նորին :

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ

Բամպակն հանգարտութեան մէջ է և այս շաբթու նոր վաճառումն չեղև : Աֆիօնն ևս 'ի հանգարտութեան դոմանի և 6 կողով վաճառեցաւ 150ի չէքին : Նոր հնձոյն աֆիօնէն 20 կողովի չափ հասաւ . բայց յոյժ թարմ (թաղէ) լինելով հազիւ թէ զինի միոյ ամսոյ կարելի է բեռնաւորել : Փաշամուան միշտ կուզուի և այսօրուան արժէքն 150—175 ղուրուշ է կենդինարը : Ոչխարի անլուայ բուրդն վաճառեցաւ 365—375ի և լուացեալն 630ի կենդինարն :

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Տօրօր Չայեան Հայ բժիշկը , որ կըգտնուի մօսիս Մաճարին դեղարանը , հոն ամեն երկուշաբթի առաւօտեան ժամը 10ին մինչեւ 12 , եւ ամեն հինգշաբթի կեսօրէն ետև ժամը 4ին մինչեւ 6 , ձրիաբար պիտի դարմանէ աղբաւորներ . իսկ ամեն օր իւր բնակարանը՝ (որ Թրասա փողոցը Հեյկնական հիւպատոսարանին դիմացը՝ քիս 65 տունն է .) այցելու պիտի ընդունի եւ պիտի նայի՝ իրեն դիմող հիւանդները , եւ մասնաւորապէս միգրադիոսիքամբ , ամենտեսակ ասիրոքիտեան ախտի եւ աղբաւորներամբ վարակեալ անձինքը , եւ երբ հարկը պահանջէ վիրաբուական գործողութիւններ եւս (օքիքախոյն) պիտի ընէ : Տօրօր Չայեանը մօրքի հիւանդութեան համար եւս յատկապէս զեղեր կուտայ :

ԼԷՕՆ ԼԷՈՆԻ

Ժօրժ Սան գաղղիացի գրագետին միպատանական պատուականագոյն երկասիրութեանց մին է , զոր

յարգոյ պարօն Գրի . Մսերեան՝ մեր քաղաքակից սուսմական երիտասարդ բարգձմեալ է 'ի գաղղիարևն 'ի հայ աշխարհի բարբառ :

Այս սիրահարական վեպն (յորմէ գրարոյական իմաստն միայն քաղի կըյորդորենք ազգային երիտասարդ եւ երիտասարդներն ընթերցողաց) 'ի շորից հատորոց բաղկացեալ պիտի լինի , որք հետագեան պիտի հրատարակուին : Ներկայ առաջին հատորը տրամալ 160 էրես կըպարունակէ եւ 'ի յոյս ընձայեալ է 'ի Տեոտեան տպարանի Զմիւռնոյ , 1875 :

Իւրաքանչիւր հատորին գինն 12 ղուրուշ է :

Հ Ի Ի Ա Ն Դ Ի Ն Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ը



Դ Ե Ղ Ա Ն Ա Տ Զ Է Ո Ւ Ն Ի Է Ի

Մարդոս ըզսլին դրութեան (Ի-Ի-Ի) շատ յոգած ըլլալ սովակի արտ մըն է և զիջերուն ամենափոքրիկ շարժումը կամ զգրգուութիւնը վշտաւել է յոյժ . վասն զի սուր գտնելու է անոր գեղը : Միակ զեղը այս է . քիչ խմէ գինի , գարեջուր , և ոչ մէկ ըմպելիք . և աւելի առէկ կըլլայ որ բոլորովին հեռաւաս նսնցուէ , և ամենին չմտն . նմանապէս խաջկէ մի խմեր , և անտանել թէթե թէթով (չոյ) գոհ եղեր : Կարելի եղածին չափ քոր օր ծծէ ամեն զիջեր իմ զեղահաստերես երբ կամ շորս հաս կըլլէ , շատ միս կեր և համեմուքէ (սուլցո) հեռի կեցեր : Երկ այս օգտակար կանոնները ըզգուծեամբ 'ի գործ գնելու ըլլաւ : միտքը շուտով պիտի հանգստանայ , մարմնիդ առողջ պիտի ըլլայ և պիտի մտնաս թէ զլոց շարժումն ունեցար :

Ա Ն Կ Ա Ր Գ Ո Ւ Թ Ի Ն Բ Ե Ր Ի Կ Ա Մ Ա Ն Ց

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մի թէ կղկղալք շափեն աւելի լոստից կըլլան կամ բաւական չեն ըլլալ : Թէ բարը կամ աւազը երկկամանց կը համարեն կամ թէ տնոց մեջ ցաւեր կը դոյնան մեջքին համապատասխանած մտքը : Այս ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հոլլուէի դեղահամարը աւելու տպեալ հրահանգաց համեմատ և անոր սպեղանիքը վեր կըլկանանց վարի կողմը անկողին մտնելու ժամանակը : Այս դրամանը անմիջական օգնութիւն մի պիտի մատուցանէ , այնինչ որ ընէ զիջեր զօր տեղը գործածուած պիտի ըլլան :

Ս Ս Ա Մ Ա Բ Ք Ս Ի Ա Ր Ի Ե Լ Ը

Որ և է զեղ մի չկրնար ստանալի գորութիւնը նորոգել և աղէկընէլ զայն շուտով՝ ինչպէս այս զեղահաստերը . որոնք անարի խաւտի թնէ կամ վատթար կերակուրէ պատճառաւ ըստ թըթութիւնը կըլկանեն և կը հասնեն 'ի լեարդն (բոլոս ինչ) : Երան գործողութիւնը կը կարգադրեն . զիջերու սատակ կըլան (Բ-Բ-Բ) զեպերու մէջ սքանչելի երկրորդութիւն մի ունի և լեղի ու ստանալի ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ :

Բ Ո Ր Ի Ո Ւ Բ Ո Ւ Մ Ի Թ Ի Բ Ա Ն Ա Տ Զ Է (Դ Ե Ղ Ի Դ) Հ Ա Ձ Ե Ի

Հ Ա Ր Ի Ո Ւ Դ Ի Ս

Հնչաւութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութեանց ամեն արտնէն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վտանգաւոր է , Սանց գործողութեանց անկարգ ընթացքին աւաղանջը չանմեղը կրնան միշտ կարգադրուիլ Հոլլուէի հոլլուէր դեղահամարով միջոցաւ : Ասորք շուտով կը դարմանեն արեամբ և է ստամոքանակաց անշարժութիւնը , կըլինի յոյն խոցած շնեղակներ , կը բարեխոսանեն շնչառութեան օստակի արագութիւնը և խոլուութիւնը կրտան շնչառութիւնը ու թըթերուն զիւրութեանն ու կանոնաւորապէս գործեն : Այս զեղահաստերը՝ իրենց մարդակն զօրութեամբ կը սրբեն արիւնը ամեն աղտոտութիւններէ , և որ եղանակաւ կըլորացնեն զգրութիւնը (Ի-Ի-Ի) ընդդէմ՝ ձիւրակն արտնէ , շնչառութեան և ուրիշ թըթային տկարութեանց :

Տ Կ Լ Ը Ս Ե Ս Ը Ս Ա Մ Ա Ր Դ Ի Ս Ե Ի Ն Բ Ե Ի Կ Ա Մ Ա Ն Ց

Տիւրութեան , թուրութեան և զլոցաւորութեան զեպերու մէջ , որոնք որ և է ընկան կամ գերախաւս շափանցուցութեանն ունի կեանքն , այս զեղահաստից այլալիչ և նորոգիչ ներգործութիւնը մեծապէս օգտակար է . քանզի մարտողութիւնը կըլկարահաստանէ , մարմնից ամեն հիւթոց թափումը կը կանոնաւորէ , ընդդէմ գրութիւնը կըզօրացնէ , հիւանդին միտքը կը յարգարե և վերապէս առողջութիւնը ձեռք կը բերէ :

Հոլլուէի զեղահաստերը ամենին օգտակար գեղերն են 'ի տեւեալ հիւանդութեանց համար :

Table with 3 columns: Ընչաղբերութիւն, Թօրացաւութիւն, Թորացաւութիւն, Մախմային ախտ, Տեոտեանութիւն, Ցաւք որովպիսի, Խիթ (սուլց), Չարգողութիւն, Միգրադիոսութիւն, Հարբուղիս, Կանոնական, Բարբառ, Ծիւրական ախտ, Գալուկն, Ախտք ընդերաց, Թանշ (Գիտարի), Բարբառի սրտի, Անկանոնութիւնը (Իսլլ պարանոցի), Քար կամ խիճ միգրանաց, Վերնոտութիւն, Նոցի, Մորթային հիւանդութիւն, Կրկն հիւանդութիւնը Գլխացաւութիւն, Թիւնք, Փողացաւ, Ափրոքիտեան ախտք, Խոցողութիւնք

Գիտել արժան է որ տպեալ հրահանգներ կան ամեն լեզու որոցմէ մէկ հատ կը գտնուի իւրաքանչիւր տուփին մէջ 'ի տպիկութիւն հիւանդաց , ամեն պարագայից մէջ :

Այս զեղահաստերը , որ կըլինուին Հոլլուէի բժշկին անտան վերատեսչութեամբ , կըվաճառեն իւր գործարանը 'ի Լ. Կոտն , Օքսֆորտ կոչուած փողոցը թիւ 533 , 'ի գին 1 և 1/2 օպիլ շեկնի , 2 3/4 և 4 1/2 շեկնի տուփը , ըստ մեծութեան տիպի :

Խմբագիր—տէր լրագրոյս , Գ. Կոտն Գ. Պալտալեան :

Ի Տ Գ Ա Ր Ա Ն Ի Ա Ր Շ Ա Լ Ո Ւ Ս Ո Ց Ա Ր Ա Ր Ա Տ Ե Ս Ն